

Հայկաձոր

Վարչական ղեկավար՝ Սերյան Սմբատյան

Հեռ 094 45 88 53

Մակերես՝ 30.2կմ²

Բնակչություն՝ 450

haykadzor.shirak@mta.gov.am

Գյուղ Մարալիկի տարածաշրջանում, Մարալիկ քաղաքից 18կմ հարավ-արևմուտք, մարզկենտրոնից գտնվում է 37կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Կարմիր վանք, Կղըքիլիսա Մեծ, Ղզըքիլիսա, Ղոշավանք, Ղոշավանք Նոր, Ղուշավանք անվանումները: Հայկաձոր է վերանվանվել 1950 թ-ին: Տեղադրված է Գյումրի-Երևան ավտոմայրուղու ձախ կողմում: Նախկինում մտել է Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի մեջ:

Գյուղը գտնվում է Ախուրյան գետի ձախ կողմում, հարթավայրում՝ ծովի մակարդակից 1450մ բարձրության վրա: Կլիմայի բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են ձնաբքերը և սառնամանիքները: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 500-600մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են: Գյուղի շրջակայքում կան սև և սպիտակավուն տուֆի պաշարներ, որոնք ունեն բոլորնաբերական նշանակություն: Գյուղում եղել են մասնակի ավերվածություններ 1988 թ-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժից:

Գյուղի դիմաց, Ախուրյանի աջ ափին գտնվում է Հոռոմոսի վանքը, որի թուրքերեն անունից առաջացել է գյուղի նախկին անունը՝ Ղոշավանք: Նախկին գյուղը տեղադրված է այժմյանից 300-400մ հարավ-արևմուտք: Գյուղում պահպանվել է Սարգիս եպիսկոպոսի կառուցած ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին (985 թ), որը վերանորոգվել է 13-րդ դարում և հիշատակվում է նաև իբրև վանք:

Գյուղի բնակչության նախնիների մի մասը գաղթել է Արևմտյան Հայաստանի Բասենի, Մուշի և Մանազկերտի շրջաններից 1829-1830թթ: 1831 թ-ին գյուղն ունեցել է 152, 1897 թ-ին՝ 1052, 1926 թ-ին՝ 840, 1939 թ-ին՝ 856, 1959 թ-ին՝ 596, 1970 թ-ին՝ 483, 1979 թ-ին՝ 413 հայ բնակիչ: Հնում այստեղ բնակվել են նաև հույներ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013 թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 450 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ և կանայք ունեն նույն համամասնությունը՝ կազմելով 50-ական տոկոս: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 34%, աշխատունակներ՝ 52%, հետաշխատունակներ՝ 14%: Ունի 49 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց:

Գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր՝ կազմելով 1000հա: Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր, կազմելով համապատասխանաբար 253 և 1459 հեկտար:

Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Զբաղվում են հացահատիկային, կերային, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ, պտղաբուծությամբ (խնձոր, տանձ, բալ): Զբաղվում են նաև խոշոր եղջերավոր անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ: Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, գազաֆիկացումը:

ՀՀ Շիրակի մարզ, գ. Հայկաձոր
Ինդեքս՝ 2901